

ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ԶԵՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Զախէն աջ նորընծայ Ս. Գէորգ Հայրապետեան, Սրբոյ Աթոռոյ Լուսարարապետ՝ Սեւան Արք. Ղարիպեան, Սրբոյ Աթոռոյ Պատրիարք Ս. Նուրիան Արք. Մանուկեան, նորընծայ՝ Ս. Ներսէս Արոյեան և նորընծայ՝ Ս. Աղան Գոգչեան

Խմբագրութեան կողմէ.- Կիրակի, Յուլիս 27-ին, Երուսաղէմի Ս. Աթոռէն ներս կուսակրօն քահանայութեան ձեռնադրութեան արժանացան Բրշ. Կարապետ, Լեւոն և Թաթուլ սարկաւազներ, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին՝ Սրբոյ Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ ձեռնաք Ամենապատիւ Պատրիարք Ս. Նուրիան Արք. Մանուկեանի: Կարապետ Սրկ. վերակոչուած է Ս. Գէորգ Արեղայ, Լեւոն Սրկ.՝ Ս. Ներսէս Արեղայ և Թաթուլ Սրկ.՝ Ս. Աղան Արեղայ: Այսու կը ներկայացնենք Պատրիարք Հօր հայրական պատգամը:

«ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՇՆՈՐՀ ԿՈՉԷ...» (Շարական)

Նուրիան Արք. Մանուկեան

Ճիշդ այս նոյն բառերով էր, որ քիչ առաջ մեր եկեղեցին կոչեց Ս. Գէորգ, Ս. Ներսէս և Ս. Աղան նորընծայ հայրերդ, դառնալու սպասաւորները Աստուծոյ խօսքին, Անոր եկեղեցիին ու դուք անսալով այսօր կու գար ձեր երիտասարդութիւնը

նուիրաբերելու քրիստոնէութեան հնագոյն եկեղեցոյ՝ Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ, որ միայն փառք ու պատիւ կը բերէ ձեզի:

Այսօր, սիրելի նորընծայ միաբանակից եղբայրներ, Պայծառակերպութեան այս սուրբ տօնին, դուք եկաք ձեր կարգին այլակերպելով դառնալու Նոր Մարդեր: Պահը սուրբ է և դուք եւս հինա մաս կը կը կազմէք այդ սրբութեան: Ձեր կեանքերը, խորհուրդներն ու գործերը յետ այսու պիտի սրբուին և դուք պարտիք դառնալ մեկական տաճարներ Սուրբ Հոգոյն: Լաւ մտիկ ըրէք և պիտի լսէք բարախումը ձեր սրտերուն, որոնք ձեզի պիտի յիշեցնեն մոռցուած բաներ: Տակաւին մօտիկ անցեալին դուք այս սուրբ պահին մասին չէիք մտածեր և տակաւին աշխարհիին ու աշխարհիկին մաս կը կազմէիք: Օրերը ձեզ համար նոյնն էին, սակայն ձեր կեանքի ընթացքը կը փոխուի, որովհետեւ դուք յօժարեցաք դառնալ ընդունարանը աստուածային շնորհներուն, դուք որ կորսուած էիք աշխարհիկին, այս փոքրիկ երկրագունդին մէջ - որ իր կարգին կորսուած է մեր անձայրածիր տիեզերքին



Նորընծաները Ա. Յակոբի Խորանին առջև

և անոր համաստեղություններուն մէջ - հիմա կը գտնուիք բոլորովին նոր կեանքի մը առաջ, ուր «Ես»ն ու «Նիւթ»ը պարտին միանգամ ընդմիշտ վերջ գտնել ձեզի համար և հոգեկան մեծ ուրախութեամբ մտնէք ձեր ընդգրկած հոգեւոր ասպարէզէն ներս:

Դուք այլեւս չէք պատկանիր մարդոց այն հոյլին, որ կ'ըսէ. «Այսօր կամ, վաղը չկամ». Եկեղեցականը թէև կ'անցնի կ'երթայ, սակայն կը մնայ անոր արանողը, գործը. ձեզմէ ակնկարծածը ամբողջական նուիրում է: Ձեր կեանքերը, սիրելի նորընծայ եղբայրներ, պիտի ուզէի նմանցնել նուագարանային գործիքներու, որոնց վրայ Արարիչ Աստուծոյ մատները հպելով պիտի ստեղծեն երկնային մեղեդին, որ իր կարգին անպայման պիտի դպչի ուրիշներու սրտին, և հոգիի ու սրտի այս երգը վախճան չկրնար ունենալ:

Դուք երաժշտական այն գործիքներն էք, որոնց մէջ մթերուած են մեր ժողովուրդին հագարաւոր տարիներու մեղեդին, և այս պահուս ձեր ստեղծիչը Իր կարգին կու գայ դպչիլ ձեր հոգիներու լարերուն, միացնելու այդ մեղեդին մեր Եկեղեցոյ հայրերուն քաղցրանուագ երաժշտութեան: Դուք 1700 տարի հեռու էք մեր հաւատքի Տօր՝ Լուսաւորիչ Տայրապետէն, որ եկաւ իր հաւատքի լոյսով լուսաւորելու խաարի մէջ թաղուած մեր երկիրը: Այսօր դուք դառնալով հարազատ զաւակները այս սրբազան Տատարութեան, այլեւս մաս կը կազմէք անոր պատմութեան, և յետ այսու իբր այդ պիտի վարուիք անոր հետ. ձեր սիրտերը պիտի պարպէք անձնական և նիւթական

հաշիւներէ, յիշելով արեւարանիչին խօսքը.

«Տոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ»: Յիշեցէ՛ք որդեակք, որ ձեր երակներուն մէջ կը հոսի Վարդանանց և մեր ազգային հերոսներու արիւնը, լեցուցէ՛ք ինքզինքնիդ Ոսկեդարու հայրերու սերունդին իմաստութեամբ և տեսիլքով: Ձեզի իբր մտատիպար ունեցէ՛ք հին աշխարհի իմաստասէրները, պատմիչներն ու գիտունները և ինքզինքնիդ հարստացուցէ՛ք անոնց իմաստութեամբ, գիտութեամբ և մանաւանդ՝ Աստուածորդոյն սիրով: Միշտ ի մտի ունեցէ՛ք, որ ձեր լաւագոյն ուսուցիչը՝ ժամանակն է, մեծագոյն քարոզիչը՝ սիրտը, լաւագոյն գիրքը՝ աշխարհը, իսկ ձեր լաւագոյն ու միակ մտերիմը՝ Տայր Աստուած:

Սիրելիներ, քաջ գիտցէ՛ք, եթէ քրիստոնէական սրբատեղիները խորհրդանշան են փրկութեան յոյսի, միա կողմէն ալ այս Սրբազան Տարատուութիւնը, Սրբոց Յակոբեանց տաճարն ու Պատրիարքութիւնը խորհրդանշան են նուիրումի իրականութեան, և այս դարու հոգեւորականը անպայմանօրէն կարիքը ունի երկուքին, որովհետեւ այս Պատրիարքութիւնը չէ հիմնուած միայն յոյսի վրայ, այլ նաեւ ճշմարիտ նուիրումի, որ ցաւ է ու յոգնութիւն, աշխատանք է և գնահատանք: Իրաքանչիւր փառքի թագ, որ կրուի այս տան զաւակներուն կողմէ, կրնայ միաժամանակ խաչ մը ըլլալ: Ինչպէս իրաքանչիւր պարտէզի ետին կայ անապատ մը, նոյնպէս իրաքանչիւր յաղթանակի ետին կայ փորձառութիւն մը, դաս մը: Եկեղեցական այս ասպարէզը, որուն կոչուեցաք դուք այսօր,



Նորընծայ՝ Տ. Ներսէս, աջին՝ քոյրը, հայրը՝ Տ. Մխիթար Քահանայ, նորընծայ՝ Տ. Աղան և Երէցկին՝ Տիկ. Ալոյեան

հո՞ն ուր ուրիշներ մարդոց կը նային իբր խնդիրներու, դժուարութիւններու և հարցերու, դուք անոնց պիտի նայիք իբր Աստուծոյ ձեռագործներուն, իբր անհատներու, առ այդ պիտի վարուիք անոնց հետ: Վերջապէս, սիրելի նորընծայ եղբայրներ, դուք պիտի դառնաք արուեստագէտը, որ մարդոց մէջ կը տեսնէ ա՛յն ինչ որ ուրիշներ կը ձախողին կամ չեն ուզեր տեսնել. նման մեծ քանդակագործներուն, որոնք ամփոփ մարմարիոնի զանգուածի ետին կը տեսնեն հրեշտակներ, սուրբեր և միայն գեղեցկութիւն: Դուք պիտի հետեւիք Սիրոյ Վարդապետին օրինակին, այլաբանօրէն ըսած՝ պիտի դառնաք ճարտարապետներ և մարդոց քայքայուած կեանքերուն յատկացնէք ծածք մը, պատեր և դուռ մը, և ձերան օրերուն անոնց հայթայթէք ջերմութիւն և ապահովութիւն: Միով բանի, իբր հոգեւորականներ դուք կոչուած էք ներշնչելու մարդը, կեանք տալու անոր, նման ծովեզերքը պտտող մարդուն, որ կը տեսնէ թէ ինչպէս ալիքները ծովաստղեր կը թափէին դուրս, աւազին վրայ, ու հոն գտնուողները կը հաւաքէին զանոնք իբր զարդ տանելու իրենց տուները, մինչ անդին յանկարծ ուրիշ մը, կեանքի հաւատացող մը, տեսնելով այս, կը սկսի տակաւին ապրող ծովաստղերը մէկ մէկ առնելով ետ ջուրը նետել զանոնք: Ահա ա՛յս պէտք է ըլլայ իրաւ կոչումը եկեղեցականին, հոգեւոր սնունդ ու մանաւանդ բարոյական կեանք հայթայթել հաւատացեալին, այս է մեր կոչումը՝ ինչպէս նաեւ ձերը:

Այս առաւօտ այս սուրբ խորանին վրայ, ուր ամբողջ դարեր այս Աթոռին մեծ զաւակներն ու երախտեալները ստացած են հոգեւորականի կոչում, դուք եւս եկաք միանալու անոնց փաղանգին: Ձեր քահանայական ձեռնադրութեամբ դուք այսօր իշխանութիւն կը ստանաք ծառայելու Քրիստոսի և անով՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ: Ձեռնադրութեան խորհուրդը կու գայ ձեզի Հին Կտակարանի՝ Ղեստացոց գիրքէն, ուր ժամանակին քահանաներ ձեռք դնելով կ'օրհնէին մատուցուիլ զոհերն ու սպասատրները Աստուծոյ սեղանին: Դուք այլեւս մատուցակներն էք Աստուածորդոյն և առ այդ բաշխողները անոր պարգեւներուն: Դուք ձեր երկրատր կեանքերը թողով ձեր ետին, պիտի ապրիք, գործէք ու զոհուիք Քրիստոսի նման, անշուշտ ոչ Խաչի վրայ, այլ անոր հաւատացեալներուն համար: Եկեղեցականը իր խօսքով և գործունէութեամբ պարտի նմանիլ Քրիստոսի. ձեր խօսքը, տեսակէտը կամ կարծիքը չէ որ կշռք պիտի ունենան, այլ անոնք պիտի արտացոլացնեն միայն Մեծ Վարդապետին՝ Աստուածորդոյն խօսքերուն ճշմարտութիւնն ու քաղցրութիւնը:

Սիրելի հաւատացեալ եղբայրներ և քոյրեր, այս նորընծաները կու գան այսօր նուիրաբերելու իրենց թարմատի կեանքերը մեր Մայր Եկեղեցոյ և ազգին ծառայութեան: Անոնք այսօր կը զինուորագրեն իրենց անձերը, տարուած այն ստածումէն, որ իրենք կը կատարեն իրա՛ւ, ճշմարի՛տ և



Նորընծայ՝ Տ. Գեորգ Արդ. Հայրապետեան

Եկեղեցասէ՛ր հայու պարտքը, լուսատրելու, ոգետրելու և վերակենդանացնելու իր գոյութեան գառիթափին վրայ գտնուող մեր ժողովուրդը, որ տակաւ կ'ուծանայ եւ կը հեռանայ իր Մայր Եկեղեցիէն և լեզուէն: Մեր հոգետր նորընծայ եղբայրները տարիներու իրենց ուսումնական շրջանը աւարտելէ ետք անցան գործնական փորձառութեան շրջանէ մը, ծանօթանալով գրասենեակային կարիքներուն, ուր անոնք վարժուեցան ու թրծուեցան Պատրիարքարանիս ընթացիկ գործերով, այսպէս մոռնալով իրենց փոքրիկ «Ես»երն ու անոնց հետ առնչուած հարցերը: Քիչ է թիւը անոնց, որոնք կրնան թափանցել այս երիտասարդ հոգիներու անձնագոհութեան իմաստին, և ասոնք են միայն, որ կ'ըմբռնեն իմաստը իրենց գոհողութեան: Այս մեր երեք ընծայեալները, երբ լսեցին դարերէն եկող կանչը, բարձրագոյնին սիրոյն խորտակեցին աշխարհիկն ու մարդկայինը և դիմեցին Աստուածայինին:

Կար ժամանակ մը, երբ այս Սրբազան Աթոռի ձեռնասունները՝ «Անձինք Նուիրեալք»ը իրենց անձերը ի սպաս կը դնէին միայն Երուսաղէմի, սակայն ետքը պայմաններու բերումով, անոնք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ կարիքներուն հասնելու համար սկսան ուղարկուիլ Երոպա և Ամերիկաներ, ու տակաւին մինչև այսօր կարիքն ու պատկերը կը մնան նոյնը: Եւ իրականութեան այս լոյսին տակ, աղու հասակ-

ները մեր այս երիտասարդ ու նորընծայ եղբայրներուն, Այլակերպութեան այս տօնին, կրկին անգամ կը վարդաձառին, երբ կու գան կնքելու իրենց հոգիներու կարմիր ուխտը, և կամ ինչպէս հիները կ'ըսէին, հագնելու «Կրակէ շապիկ»ը մեր Եկեղեցոյ:

Այսօր այս սուրբ պահուն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն հոգիները կը խայտան ի տես այս նուիրեալներուն, և վստահ եղէք սիրելի միաբանակից եղբայրներ, որ մեր՝ ողջերուս ուրախութեան կը միանան այս հաստատութեան սրբազան և մեծ երախտատրները, որոնց տեսլականն է որ այս ձեռով մարմին կ'առնէ Պայծառակերպութեան այս սուրբ տօնին:

Սա պահուս կը խնդրենք մեր հաւատացեալ ժողովուրդէն բաժնեկից ըլլալ մեր ուրախութեան և աղօթելու այս երիտասարդ հոգիներուն համար որ անոնք ըլլան և միշտ մնան «Մշակք առանց ամօթոյ»:



Դուք այլեւս չէք պատկանիր մարդոց այն հողիին, որ կ'ըսէ. «Այսօր կամ, վաղը չկամ». եկեղեցականը թէև կ'անցնի կ'երթայ, սակայն կը մնայ անոր աւանդը, գործը. ձեզմէ ակնկալուածը ամբողջական նուիրում է: (Ն.Ա.Մ.)



Նորընծաները Պատրիարք Հօր հետ